

մտած մեր մարմնի երակների մէջ: Սակայն, ինչպէս յետոյ կը տեսնենք, այդ բջիջներն անկոչ հիւրեր չեն մեղ համար և նոյնիսկ մեծ դեր էլ են կատարում մարդկանց կեանքում:

Մարդկանց օրգանիզմների նման բազմաթիւ կենդանիներ և բոյսեր նոյնպէս կազմուած են անթիւ բջիջներից:

Այս գաղափարներն այժմեան բնագէտների աշխարհայեցողութեան հիմքն են կազմում: Մեր ժամանակներում նոյնիսկ դժուար է երևակայել գիտական բիոլոգիա առանց վերոյիշեալ գաղափարների: Բնախօսութեան, բժշկականութեան, կենդանաբանութեան, բուսաբանութեան և սաղմնաբանութեան մէջ անկարելի է մի բայլ անգամ անել առանց բջիջների օգնութեան:

### ՍԱՄՈՒԵԼ ԲԱԼԱԴԵՍՆ

(Կը շարունակուի)

### Գ Ի Տ Ա Կ Ա Ն Ք Բ Ռ Ո Ն Ի Կ

Բաղիումը օրէցօր աւելի և աւելի է գրաւում գիտական աշխարհի ուշադրութիւնը: Արտասահմանեան թէ մասնագիտական և թէ ընդհանուր մամուլը լիքն են այդ բազմահարաշ մետաղին նուիրուած յօդուածներով: Այս յունուար ամսից Պարիզում սկսուել է հրատարակուել նրան նուիրուած յատուկ մի օրգան՝ Le Radium ամսագիրը: Զի անցնում ամիս, նոյնիսկ շաբաթ, որ չգտնուեն բաղիումի նոր յատկութիւններ, նորերումն գերմանական Der Motorwagen ամսագիրը նուիրել է մի յօդուած բաղիումին, իբրև ոյժի (Էներգիայի) աղբիւրի:

Ինչպէս յայտնի է<sup>\*)</sup> բաղիումը արձակում է ճառագայթներ, որոնք ոչ միայն զանազան քիմիական ազդեցութիւն ունեն, այլև ելեկտրալուծական: Եւ յօդուածագրի կարծիքով այս վերջին յատկութիւնը կարող է ունենալ մեծ գործնական նշանակութիւն, նամանաւանդ աւտոմոբիլների տարածման հարցում: Այժմ իհարկէ՝ խօսել այդ բանի մասին դեռ շուտ է, քանի որ բաղիումը չափազանց հազւագիւտ է և թանգ: Այժմ՝ օրինակ՝ մի գրամ մաքուր բաղիումը (մօտ  $\frac{1}{4}$  մախալ) արժէ մօտ մի միլիոն ըուրլի: Բայց հէնց վերջին ժամանակներս կանադայից յայտնում են, որ այստեղ գտնուած է մեծ քանակութեամբ բաղիում պարունակող մի հանք, որը շուտով կը սկսուի:

\*) Տիւ «Մուրճ», 1903, № 4 և 8:

շահագործուել: Բանը նրանումն է, որ եթէ ջրի մէջ մի փոքր կտոր բաղիում դցնք, վերջինս առանց փոփոխութեան ենթարկուելու կարող է ինչպէս եղեկտրական հոսանք տարրալուծել ջուրը ( $H_2O$ ) ջրածնի ( $H$ ) և թթուածնի ( $O$ ). իսկ այս վերջինների խառնուրդը տալիս է շառաչող զագ, որի պարբերական պայթումները կարող են շարժել մեքենան: Ուրեմն բաւական է աւտոմորիկի մէջ ունենալ ջուր և նրա մէջը զցել մի փոքրիկ կտոր բաղիում, որպէսզի ունենանք շարժող ոյժի անընդհատ աղբիւրը: Այժմ աւտոմորիկասը յաճախ դրուած է լինում գըժուար դրութեան մէջ, որովհետև հեշտ չէ ամեն տեղ բենզին ճարել, որ այրուելով տալիս է նրան շարժելու ոյժը:

Բաղիումի վերյիշեալ թանգութիւնը և հազւագիւտ լինելը ստիպում են գիտականներին որոնել այնպիսի տարրեր, որոնք կարող լինէլն թէկուզ մի փոքր փոխարինել նրան: Եւ իսկապէս նորերում վիեննայում պրոֆ. Մարկվալ' զեկուցում է արել մի այդպիսի նոր տարրի մասին, որի անոնը նա զբել է բաղդօտելլուտ: Այս վերջինս ստացում է վիսմուտ պարունակող մի հանքից: Բագիուտելլուտը բաղիումից զանազանում է նրանով, որ առաջնի բենտոքենեան ճառագայթները աւելի թոյլ են: Այս նոր մետաղի միջոցով կարելի է ի միջ այլոց հետութեամբ զանազանել իսկական բրիլիանտը կեղծից:

Մի ուրիշ քիմիկոս Կիւնց գտել է մի հանք, որը ներգործուած լինելով բաղիումի ճառագայթներին, ինքը ստանում է այս վերջինի յատկութիւնները և պահպանում է այդ յատկութիւնները բաւական երկար: Այս հանքը կոչուած է կիլնցիտ: Կիւնցը մի այլ քիմիկոսի հետ միասին (*Բասկերվիլ*) գտել է մի ուրիշ հանք, որը բաղիումի ճառագայթների ոյժը աւելացնում է մի քանի հարիւր անգամ:

Հետաքրքրիր է, թէ որքան տաքութիւն է արձակում բաղիումը: Հաննովերի աեխնիկական ուսումնարանի պրոֆ. Պրեխտ գտել է, որ մի գրամ բաղիումը մի ժամում տալիս է 98,8 կալորի տաքութիւն:

Վաղուց յայտնի է, որ մարգարիտը դոյանում է որոշ տեսակի փափկամարմինների խեցիի ներսի պատի վրայ նրանց, որ այնտեղ ընկնում է մի որևէ առարկայ և այդ առարկայի շուրջը ստացում է կենդանու մարմից արտաթորող մի

առանձին հեղումկ՝ պերլամուտր: Բայց թէ ինչ առարկաներ են դրանք, մինչև այժմ յայտնի չէր: Պրոֆ. Հատմանն այդ հարցը ուսումնակրելու համար ուղերութել է մի խումբ մարդկանցով Ցէյլն կղզին: Եւ նրան յաջողութել է գտնել մարգարտի գոյանալու պատճառը: Այդ մի առանձին տեսակ որդի թրթուր է: Իսկ անգիտացի ընագէտ Հորնելը, որը մնացել էր այդ կղզում պրոֆ. Հարտմաննի գիւտը ստուգելու, ոչ միայն հաստատեց Հարտմաննի գիւտը, այլ և նրան յաջողութեց հետևել, թէ ինչ-պէս է այդ թրթուրն ընկնում խխունջի մէջ:

Այսպէս գտնուած է մարդու այս թանգագին զարդարանք-ներից մէկի գոյանալու գաղտնիքը:

Այս տարւայ սկզբներում Լոնդոնում լոյս տեսաւ միջազգային գիտական գրականութեան ցուցակի առաջին պրակները (International Catalogue of scientific Literature): Այս հսկայ գործը ձեռնարկել են չորս պետութիւններ: Ֆրանսիան, Գերմանիան, Խտալիան և Միացեալ-Նահանգները: Գլխաւոր կառավարող մարմինը կազմում է միջազգային բիւրօ, որը կը հաւաքուի Լոնդոնում 1905—10 թւականներին ու այնուհետ ամեն 10 տարին մի անգամ: Իսկ գործի մշտական վարող մարմինը կազմուած է չորս պետութիւնների ներկայացուցիչներից: Հրատարակութեան լեզուն անգլիերէնն է:

Ցուցակի մէջ կը լինեն 17 գիտութիւնների նուիրուած բոլոր գրքերի գերնագրերը՝ սկսած 1901 թւից:

Օդեսայում մի բժիշկ (Փոլուք) նոր գիւտ է արել, որ ունի մեծ նշանակութիւն բակտերիալոգիայի համար:

Մենչև այժմ բակտերիաներ զարգացնելու համար գիտնականները գործ էին ածում կրծող կենդանիների և թոչունների մի քանի տեսակները: Բժիշկ Դոլուր գտել է, որ նոյն նպատակին կարող են ծառայել և՛ միջատները: Պ. Գոլուրը մարդու վարակիչ հիւանդութիւններ առաջացնող բակտերիաների մի քանի տեսակները պատուաստել է զանազան միջատների և ըստացել է յաջող ելք: Այդ պատուաստած միջատները կարող են առանց կերակրի ապրել մօտ 14 օր, իսկ եթէ կերակրենք—մօտ 3 շաբաթ: Պատուաստումից մի քանի օր անց այդ միջատները ներկայացնում են ուղղակի քսակ, որ լիքն է լինում բակտերիների մաքուր կու' տուրայով:

Ամերիկացի Ռայտ եղբայրներին յաջողուել է՝ լրագրերի ասելով՝ իրանց օդապարիկ մեքենայով անել 5 կիլոմետր քամու դէմ՝ սլանալով 256 մետր մի ըռպէռաւ։ Այդ օդապարիկն ունի շոգիով բանող երկուժանոց մի շարժիչ մեքենայ։ Նրա լայնութիւնն է 12 մետր և 12 սանտիմետր։

---

Ուսւ յայտնի գիտնական պրոֆ. Մեջնիկով փորձեր է արել սիֆիլիսի թոյնը պատուաստելու մարդանման կապիկներին։ Այդ փորձերը ցոյց տուին, որ սիֆիլիսի պատուաստումը պահպանում է կապկին այդ հիւանդութեամբ վարակուելոց։ Նոյն փորձը կրկնեց պրոֆ. Օսկար Լասսար Բերլինում նոյնպէս յաջող։ Բայց դժբախտութիւնը նրանումն է, որ կապիկները նւրոպայում երկար չեն ապրում, այլ շուտով հիւանդանում են թոքախտով և մեռնում։ Այդ պատճառով այժմ Բերլինում միտք է ծագել մի գիտական արշաւանք գործել Բորնէօ կամ Սումատրա կղզիները և այնտեղ օրանգ-ուտանգ և հիբրոն կապիկների հայրենիքում կրկնել նոյն փորձերը։ Այս գործի համար անհրաժեշտ փողի մի մասը արդէն հաւաքուել է։ Պէտք է յուսալ, որ հետո չէ այն ժամանակը, երբ մենք կ'ունենանք հակասիֆիլիսական շիջուկ, և մարդկութիւնը այդպիսով կ'ազատուի մի սարսափելի հիւանդութիւնից ևա։

---